ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱՄՎՔ- ԳՀԱՇՁԲ-20/23

ք. Վեդի «20»օգոստոսի 2020 թ.

Վեդու համայնքապետարան, ի դեմս համայնքի ղեկավար Վ.Բարսեղյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Վիգիշինա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Սուքիասյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Վեդի համայնքի Կասյան 26/1 բազմաբնակարան բնակելի շենքի ջերմամեկուսացման էներգաարդյունավետության բարձրացման միջոցառումների իրականացում (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 90 **օրացույցային օր** :

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 20 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված

աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 40579002 (քառասուն միլիոն հինգ հարյուր յոթանասունինը հազար երկու) ՀՀ դրամ, որից 6763167-(վեց միլիոն յոթ հարյուր վաթսուներեք հազար հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[32]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

---

[31] Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[32] Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[35]

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Վեդու համայնքապետարան Ք.Վեդի Թումանյան 6 ՀՀ Ֆինանսների նախարարություն Հ/Հ 900 422 102 229 ՀԿՀՀ 04100912 Համայնքի ղեկավար Կ.Բարսեղյան ---------- /ստորագրություն/ Կ.Տ	«Վիգիշինա» ՍՊԸ ք. Երևան, Դրոյի 14/2 «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ ՀՀ 1660005668680100 ՀԿՀՀ 00894311 Տնօրեն՝ Կ. Սուքիասյան ---------- /ստորագրություն/ Կ.Տ

[35] *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում*

Հավելված թիվ 1
« 20 » օգոստոսի 2020 թ. կնքված
ՀՀ ԱՄՎՔ- ԳՀԱՇՁԲ-20/23 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅԱՆ 26/1 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ՋԵՐՄԱՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ ԵՎ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ

Հ/Հ	Շիֆր, նորմա-տիվի համարը	Աշխատանքների, ծախսերի անվանումը և չափման միավորը	Չ/ մ	Քանակը	Միավորի արժեք	Ընդհանուր արժեքը	Ընդհանուր արժեքը (տոկոս)
		Շինարարական աշխատանքներ					
	ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ						
1	11-157-1 K=1.4	Գազի հաշվիչների ապամոնտաժում և մոնտաժում նույն տեղերում "G-4	հատ	29	4.955	143.702	
2	E16-58 K=0.4	Գազատար խողովակների ապամոնտաժում d=100	գ,մ,	53	0.704	37.334	
3	E16-50 K=0.4	Գազատար խողովակների ապամոնտաժում d=20	գ,մ,	267	0.268	71.450	
4	E16-54 K=0.4	Գազատար խողովակների ապամոնտաժում d=50	գ,մ,	6	0.339	2.035	
5	E16-58	Նոր գազատար խողովակների մոնտաժում d=100	գ,մ,	56	8.209	459.732	
6	E16-50	Նոր ազատար խողովակների մոնտաժում d=20	գ,մ,	280	1.478	413.832	
7	E16-54	Նոր գազատար խողովակների մոնտաժում d=50	գ,մ,	6	4.341	26.048	
8	E16-54	Մետաղյա շինվածքներ գազատարները պատերին ամրացնելու համար	կգ	76	0.716	54.408	
9	E15-613	Խողովակների յուղաներկում երկու անգամ	100մ2	0.41	110.571	45.334	
10	P8-186	Ջրահեռացման խողովակների քանդում	գ.մ.	97.8	0.187	18.266	
11	8-191	Ջագարների և Ջրահեռացման խողովակների տեղադրում ցինկապատ հարթ թիթեղից 0,55 մմ., Φ120	կոմպ	6	65.176	391.057	
		Ընդամենը				**1663.198**	**4.10**
	ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐ						
1	E46-123	Պատուհանների ապամոնտաժում	մ2	7.25	2.644	19.168	
2	E46-123	Գոյություն ունեցող ապակե բլոկներով շարի քանդում H=200մ	մ2	17.25	2.644	45.606	
3	ի.տ.	Մետաղապլաստե արտաքին պատուհան Պ-1 15 հատ -ապակեփաթեթը՝ երկշերտ -փաթեթի կտրվածքը՝ 4մմx12մմx4մմ -պրոֆիլի լայնքը՝ ոչ պակաս 60մմ -պրոֆիլի խցերի քանակը՝ ոչ պակաս 4 -մետաղական միջուկի հաստությունը՝ ոչ պակաս 1.2մմ -պրոֆիլի գույնը՝ սպիտակ -կոնստրուկցիան՝ չբացվող	մ2	11.21	29.083	326.025	
4	E8-140	Բացվածքի փոքրացում CMU բլոկով	մ3	3.312	33.205	109.976	
5	ի.տ.	Մետաղապլաստե արտաքին պատուհան Պ-2 3 հատ -ապակեփաթեթը՝ երկշերտ -փաթեթի կտրվածքը՝ 4մմx12մմx4մմ -պրոֆիլի լայնքը՝ ոչ պակաս 60մմ -պրոֆիլի խցերի քանակը՝ ոչ պակաս 4 -մետաղական միջուկի հաստությունը՝ ոչ պակաս 1.2մմ -պրոֆիլի գույնը՝ սպիտակ -կոնստրուկցիան՝ չբացվող	մ2	5	29.083	145.417	
6	ի.տ.	Անողացված ալյումինե դուռ Դ-1 (3 հատ) -ապակեփաթեթը՝ երկշերտ -փաթեթի կտրվածքը՝ 4մմx12մմx4մմ -պրոֆիլի լայնքը՝ ոչ պակաս 60մմ -պրոֆիլի գույնը արծաթագույն -կոնստրուկցիան՝ բացվող -խուլ մասերը՝ ջերմամեկուսիչ շերտով	մ2	7.8	119.714	933.772	
7	շուկա	Դռան ավտոմատ փական (швецарь)	հատ	3	35.795	107.385	
8	E9-34 K=0.5	Մետաղական փոշեներկած դուռ, Դ-2 1 հատ կողպեքով	մ2	1.5	136.617	204.925	
9	շուկա	Մուտքի փականի տեղադրում	հատ	1	28.206	28.206	

		Ընդամենը				1920.480	4.73
		ՊԱՏԵՐԻ ՋԵՐՄԱՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ					
1	E26-31 K=0.05	Արտաքին պատերի ջերմամեկուսացում հանքային բամբակի կոշտ սալերով - 50մմ (խտությունը՝ 100-140 կգ/մ3/ ջերմահաղորդականությունը՝ ≤ 0.040 Վտ/մ0/Կ), որն ամրացվում է պոլիմերացեմենտային հատուկ սոսնձով	մ2	261.6	11.398	2981.699	
2	E26-38 K=0.05	Արտաքին պատերի ջերմամեկուսացում XPS փրփրապոլիստիրոլ, խտությունը՝ 30-40 կգ/մ3 ջերմահաղորդականությունը = 0.034 վտ/մ0 Կ, որն ամրացվում է պոլիմերցեմենտային հատուկ սոսնձով	մ2	1171.8	8.111	9503.930	
3	E15-298 E15-304	Արտաքին պատերի ե/բ դեկորատիվ էլեմենտների Ф3 Вр-I 50x50մմ բջջային ցանցով ամրանավորում և ց/ա սվաղում	մ2	37.5	7.992	299.693	
4	E26-50 E15-603	Պոլիմերացեմենտային հատուկ սոսնձով սվաղ ապակեթելքային ցանցով +2.9 - +15.33 նիշում	մ2	1065.6	5.241	5584.607	
5	E15-298 E15-304	Ցեմ. ավազի սվաղ Вр-Ø3 50x50մմ բջջային ցանցով ամրանավորված -1.1 - +2.9 մ նիշում	մ2	368.8	7.992	2947.381	
6	E10-155 կիր.	Պատշգամբների բացվածքների պարագծով անկյունակների տեղադրում (լրացուցիչ ուժեղացում ոչ մետաղական ցանցով)	գ.մ.	213.2	0.500	106.516	
7	E10-155 կիր.	Պատուհանների 1450x1150 մմ բացվածքների պարագծով անկյունակների տեղադրում (լրացուցիչ ուժեղացում ոչ մետաղական ցանցով)	գ.մ.	78	0.500	38.969	
8	E10-155 կիր.	Պատուհանների 1450x12000 մմ բացվածքների պարագծով անկյունակների տեղադրում (լրացուցիչ ուժեղացում ոչ մետաղական ցանցով)	գ.մ.	318	0.500	158.875	
9	E10-155 կիր.	Պատուհանների 1450x1750 մմ բացվածքների պարագծով անկյունակների տեղադրում (լրացուցիչ ուժեղացում ոչ մետաղական ցանցով)	գ.մ.	25.6	0.500	12.790	
10	E10-155 կիր.	Պատուհանների 650x1150 մմ բացվածքների պարագծով անկյունակների տեղադրում (լրացուցիչ ուժեղացում ոչ մետաղական ցանցով)	գ.մ.	54	0.500	26.979	
11	E10-155 կիր.	Դռների 2000x1400 մմ բացվածքների պարագծով անկյունակների տեղադրում (լրացուցիչ ուժեղացում ոչ մետաղական ցանցով)	գ.մ.	20.4	0.500	10.192	
12	E10-155 կիր.	Դռների 2000x750 մմ բացվածքների պարագծով անկյունակների տեղադրում (լրացուցիչ ուժեղացում ոչ մետաղական ցանցով)	գ.մ.	5.5	0.500	2.748	
13	E12-280	Արտաքին պատուհանագոգ ցինկապատ թիթեղից 0.55 մմ, 1150x250մմ	մ2	16.1	5.270	84.843	
14	E12-280	Արտաքին պատուհանագոգ ցինկապատ թիթեղից 0.55 մմ, 1750x250մմ	մ2	1.75	5.270	9.222	
15	E12-280	Արտաքին պատուհանագոգ ցինկապատ թիթեղից 0.55 մմ, 1200x250մմ	մ2	18	5.270	94.856	
		Ընդամենը				21863.301	53.88
		ՏԱՆԻՔԻ ՋԵՐՄԱՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ					
16	12-289	Գոլորշամեկուսիչ շերտ՝ պոլիպրոպիլենից, խզման բեռնվածքը՝ ոչ պակաս 1068/890 Ն/5 սմ, գոլորշաթափանցման դիմադրությունը ոչ պակաս 7 քմ*ժ*Պա/մգ, ջրակայունությունը՝ ոչ պակաս 1000 մմ ջ.ս.	100մ2	5.27	110.624	583.097	
17	E26-31 K=0.05	Հանքային բամբակ, 30 կգ/խմ, 150 մմ հաստությամբ /100 և 50 մմ երկու շերտով/: Խտությունը՝ 20-30 կգ/խմ, Ջերմահաղորդականության գործակիցը ≤ 0.040 Վտ/մ 0/C	մ2	527.1	10.810	5698.003	
18	12-289	Ջրամեկուսիչ, գոլորշաթափանց՝ պոլիպրոպիլենից, հրակայուն, խզման բեռնվածքը՝ ոչ պակաս 330/ 180 Ն/5 սմ, ջրային գոլորշու հոսքի խտությունը ոչ պակաս 1000 գ/քմ*24ժամ, ջրակայունությունը՝ ոչ պակաս 1000 մմ ջ.ս.	100մ2	5.27	110.624	583.097	
19	շուկա	Ալյումինե անկյունակ 40*40*4, L-100 մմ, ք. 600 մմ	մ	25	1.074	26.846	
20	E10-70	Նրբատախտակ 20 մմ	մ2	26.06	7.650	199.348	
21	E10-70	Փայտե չորսու, 160 x 80 մմ L= 74.5 մետր	մ3	0.95	274.477	260.753	
22	E26-31 K=0.05	Օդափոխության հորանների ջերմամեկուսացում փայլաթիթեղապատ ապակեբամբակով 50 մմ, ոչ ավել 130 կգ/խմ	մ2	72	6.759	486.641	
		ՀԱՐԴԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ					

23	P11-225	Շքամուտքի պատուհանների, արտաքին դռան ներքին շեպերի գաջի սվաղի քանդում	մ2	14.04	1.105	15.515	
24	P11-57	Շքամուտքի ներքին պատերի գաջի սվաղի մասնակի նորոգում	մ2	94.45	3.208	302.966	
25	P11-80	Շքամուտքի ներքին պատերի վրայի գոյություն ունեցող ներկածածկույթի մաքրում, մանր ճեղքերի եւ անցքերի լցնումով	մ2	535.23	0.397	212.574	
26	E15-660	Շքամուտքի ներքին պատերի ներկում լատեքսային ներկով, բարելավված որակի, ծեփամածկումով	մ2	314.84	1.496	470.851	
27	E15-568	Պատերի յուղաներկում բարելավված որակի, ծեփամածկումով	մ2	314.84	2.355	741.563	
28	E15-277a	Շքամուտքի պատուհանների, արտաքին դռան ներքին շեպերի գաջե սվաղում	մ2	14.04	6.697	94.030	
29	E15-660	Շքամուտքի պատուհանների, արտաքին դռան ներքին շեպերի ներկում լատեքսային ներկով, բարելավված որակի, ծեփամածկումով	մ2	14.04	1.496	20.997	
30	P11-60	Շքամուտքի առաստաղի գաջի սվաղի մասնակի նորոգում	մ2	8.69	3.709	32.235	
31	P11-80	Շքամուտքի առաստաղի վրայի գոյություն ունեցող ներկածածկույթի մաքրում, մանր ճեղքերի եւ անցքերի լցնումով	մ2	49.22	0.397	19.548	
32	E15-661	Շքամուտքի առաստաղների ներկում լատեքսային ներկով, բարելավված որակի, ծեփամածկումով	մ2	57.9	1.675	96.999	
33	E15-539	Ճակատների ներկում	մ2	1433.8	0.829	1188.578	
34	E8-190	Գույքային տախտակամածի տեղադրում և քանդում՝ 2 անգամ	100մ2	7.17	96.093	688.889	
35	C310-13	Շին. աղբի հավաքում, բարձում և տեղափոխ. 13 կմ (գոյություն ունեցող)	տ	1.6	3.857	6.170	
36	C310-13 տ.մ.կ. 29	Առաջացած շին. աղբի հավաքում, բարձում եւ տեղափոխում 13կմ	տ	4.37	3.857	16.853	
		Մալվածք					
37	E27-86-1 19-4	Բազալտե եզրաքարերի տեղադրում 150x300մմ չափսի բետոնե հիմքի վրա	100մ	1.116	1308.155	1459.901	
38	E27-43 11-1	Խճե միաշերտ հիմնատակի իրականացում 12սմ հաստությամբ	100մ2	1.3	168.152	218.598	
39	E27-251 63-1	Բիտումի տարածում 4,12տ./1000մ2	տ	0.536	295.758	158.408	
40	E27-164-2 E27-165-2	Տաք մանրահատիկ ա/բետոն h=4սմ „Բ"տիպ	100մ2	1.3	441.887	574.454	
		Ընդամենը				14156.916	34.89

Էլեկտրալուսավորություն և էլեկտրաուժային մաս

ՀՀ	Շիֆր, նորմա-տիվի համար	Աշխատանքների, ծախսերի անվանումը և չափման միավորը	չ/մ	Քանակը	Միավորի արժեք	Ընդհանուր արժեքը	Ընդհանուր արժեքը (տոկոս)
1	Ц8-603-1	ԼԵԴ լուսատու հակավանդալային, շարժման և լուսավորության տվիչներով,գիշեր- ցերեկ,11Վտ,4000-4500K, 1070Lm	հատ	36	10.510	378.366	
2	ի.տ.	Պլաստիկ երկտեղանոց տուփ, IP 40, մալուխային խցուկներով, արտաքին տեղադրման	հատ	3	0.304	0.913	
3	Ц8-525-1	Փոփոխական հոսանքի ավտոմատ անջատիչ 2Px16Ա	հատ	3	5.517	16.551	
4	8-471-3 կիր.	Հողանցման հաղորդաձող	հատ	3	3.398	10.195	
5	ի.տ.	Բաժանման տուփ IP45, 100x100x60մմ մալուխային խցուկներով/	հատ	15	0.134	2.013	
6	Ц8-149-1	Մալուխ՝ պղնձե ջիղերով ВВГнг -LS, 3x2.5մմ	մ	60	0.908	54.469	
7	Ц8-149-1	Մալուխ՝ պղնձե ջիղերով ВВГнг -LS, 3x1.5մմ	մ	222	0.619	137.503	
	11-840-6	ՊՎՔ տուփախողովակ 25x16մմ	մ	267	0.859	229.449	
9	8-417-5	ՊՎՔ խողովակ 20մմ	մ	15	0.561	8.419	
10	E46-51	Միջհարկային ծածկի մեջ անցքի բացում	հատ	15	0.486	7.283	
11	P23-57	Անցքերի լցափակում	հատ	15	1.214	18.208	
12	Ц8-613-2	Հաշվիչ բնակարանային երկսակագնային	հատ	3	22.905	68.716	
13	8-371-2	Արկղ հաշվիչի տեղադրման համար	հատ	3	12.517	37.550	

		Ընդամենը				975.107	2.40
		Ընդամենը ներառյալ ԱԱՀ				40579.002	
		Ընդամենը՝ %					100.00

* Կապալառուն աշխատանքները կատարում է ք Վեդի Կասյան 26/1 հասցեներում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վեդու համայնքապետարան
Ք.Վեդի Թումանյան 6
ՀՀ Ֆինանսների նախարարություն
Հ/Հ 900 422 102 229
ՀՎՀՀ 04100912
Համայնքի ղեկավար
Վ.Բարսեղյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Վիգիշինա» ՍՊԸ

ք. Երևան, Դրոյի 14/2
«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ 1660005668680100
ՀՎՀՀ 00894311
Տնօրեն՝ Վ. Սուքիասյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 20 » օգոստոսի 2020թ.կնքված
ՀՀ ԱՄՎՔ- ԳՀԱՇՁԲ-20/23_ծածկագրով պայմանագրի

ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՍՅԱՆ 26/1
ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ՋԵՐՄԱՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ ԵՎ
ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Շենքի արտաքին պատերի ջերմամեկուսացում,սվաղում և ներկում	Համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	10 օրացույցային օր հետո
2	Բարձր ջերմաֆիզիկական ցուցանիշներ ունեցող պատուհանների, վիտրաժների և դռների տեղադրում	Համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	20 օրացույցային օր հետո
3	Վերնածածկի ջերմամեկուսացում	Համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	20 օրացույցային օր հետո
4	Ներշենքային լուսավորության համակարգերի տեղադրում	Համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	70 օրացույցային օր հետո
5	Ներշենքային հարդարման աշխատանքների իրականացում	Համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	90 օրացույցային օր հետո
	ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՍՅԱՆ 26/1 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ՋԵՐՄԱՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ ԵՎ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	Համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	90 օրացույցային օր հետո

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վեդու համայնքապետարան
Ք.Վեդի Թումանյան 6
ՀՀ Ֆինանսների նախարարություն
Հ/Հ 900 422 102 229
ՀՎՀՀ 04100912
Համայնքի ղեկավար
Վ.Բարսեղյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Վիգիշինա» ՍՊԸ

Ք. Երևան, Դրոյի 14/2
«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ 1660005668680100
ՀՎՀՀ 00894311
Տնօրեն՝ Վ. Սուքիասյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 20 » օգոստոսի 2020 թ. կնքված
ՀՀ ԱՄԿՔ- ԳՀԱՇՁԲ-20/23_ ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ
դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45321100	Ջերմամեկուսացում և էներգիաարդյունավետություն	... %	... %	... %	... %	... %	... %	... %	%	... %	... %	... %	... %	40579002

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վեդու համայնքապետարան
Ք.Վեդի Թումանյան 6
ՀՀ Ֆինանսների նախարարություն
Հ/Հ 900 422 102 229
ՀՎՀՀ 04100912
Համայնքի ղեկավար
Վ.Բարսեղյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Վիգիշինա» ՍՊԸ

ք. Երևան, Դրոյի 14/2
«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ 1660005668680100
ՀՎՀՀ 00894311

Տնօրեն՝ Վ. Սուքիասյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը
Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը
պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն